



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
«ՀԵՌԱՎԱՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՄԱՏԵՂ
ԴԻՊԼՈՄԻ ՇՆՈՐՀՄԱՄԲ» ԾՐԱԳԻՐ**



**ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

15 դեկտեմբերի 2017թ.


ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ԿՐԹՈՒԹՅԱՆ) ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

- ❑ «Կրթության մասին» ՀՀ օրենք
- ❑ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք
- ❑ ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատելու մասին» N 124-Ն որոշում
- ❑ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի «Հեռակա, ինչպես նաև հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցում չթույլատրվող բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին» N 692-Ն որոշում



ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

- ❑ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 27-ի N 1348-Ա/Ք հրաման «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կազմակերպման մեթոդական ուղեցույց»
- ❑ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին» N 1193-Ն հրաման
- ❑ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 1997 թվականի մարտի 3-ի N 13-ՔՆ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1197-Ն հրաման և այլն.



«Բարձրագույն և հեղբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսուցման տարբեր ձևերով՝ **առկա (ստացիոնար), հեռակա,**




հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստենսիա):

Հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատում է ՀՀ կառավարությունը:



«Կրթության մասին» ՀՀ օրենքի
12-րդ հոդվածի 1-ին մասի
համաձայն՝

սովորողների
կարողություններին և
պահանջմունքներին
համապատասխան՝ կրթական
ծրագրերն իրականացվում են
**առկա (ստացիոնար),
հեռակա, հեռավար
(դիստանցիոն) և
դրսեկության** (ընտանեկան
և ինքնակրթության) ձևերով:



«Բարձրագույն և հետբուհական
մասնագիտական կրթության
մասին» ՀՀ օրենքի 3-րդ
հոդվածի 10-րդ կետ.

**հեռավար
(դիստանցիոն)**

ուսուցում՝ համակարգված
ուսուցման ձև, երբ անմիջական և
ոչ անմիջական ուսուցման
գործընթացը սովորողի և
դասախոսի միջև իրականացվում
է հիմնականում տեղեկատվական
տեխնոլոգիաների և
հեռահաղորդակցության
միջոցներով.


ՀՀ կրթութեան և գիտութեան նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին» N 1193-Ն հրաման

Կարգով սահմանվում է մագիստրատուրայի կրթական ծրագրերի հրականացնող կազմակերպությունների մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման պայմանները:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱ-ԿԵՐ-ՊՈՒՄԸ
ԵՎ- ԱՆՑ-ԿԱ-ՑՈՒՄԸ

Հեռավար ուսուցման
ժամանակ պրակտիկաները
կազմակերպվում և
անցկացվում են
ավանդական եղանակով՝
կազմակերպությունում
գործող կարգին
համապատասխան:–



ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ (ԱԶԱՏՄԱՆ) ԵՎ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ


ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին» N 1242-Ն հրաման

Կարգով սահմանվում են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր (բակալավրի և մագիստրոսի) իրականացնող հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման ընդհանուր պայմանները:




ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N 938-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1240-Ն որոշում

Կարգի գործողությունը տարածվում է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների վրա՝ անկախ ուսուցման ձևից (առկա, հեռակա, հեռավար), իրականացվող հիմնական կրթական ծրագրերից (բակալավր, մագիստրոս և հետազոտող) և մասնագիտություններից:



ՀՀ կրթութեան և գիտութեան նախարարի
2011 թվականի հոկտեմբերի 31-ի
«Հաստատանի Հանրապետութեան
բարձրագույն ուսումնական
հաստատութիւններում
շրջանավարտների **ամփոփիչ
ատեստատվորում անցկացնելու կարգը**
հաստատելու և ՀՀ կրթութեան և
գիտութեան նախարարի 2007 թվականի
մարտի 3-ի Սահմանադրութեան հոդուած
10-ի կրթութեան հրաման




«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին»

ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորված անձը նաև իրավունք ունի ստանալ կրթություն, զբաղվել ստեղծագործ աշխատանքով:




Կալանավորված անձանց կամ դատապարտյալների մասնագիտական միջին, բարձրագույն և հետբուհական կրթությունն իրականացվում է դրսեկության և հեռավար ձևերով՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 112-րդ և 113-րդ կետեր



ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N 124-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի համաձայն՝ **հեռավար ուսուցումը կարող են կազմակերպել միայն համապատասխան կրթական ծրագրի իրականացման լիցենզիա ունեցող ուսումնական հաստատությունները՝** հիմնական և (կամ) լրացուցիչ մասնագիտական, ինչպես նաև հետբուհական կրթական ծրագրերով:



Հեռավար ուսուցման կազմակերպման գործընթացում լիցենզավորման պահանջներ

- ❑ ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի «ՀՀ-ում կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և ՀՀ կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 808-Ն որոշմամբ հաստատված N 19 հավելված (Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգ)



Ց Ա Ն Կ

ՀԵՌԱՎԱՐ ՁԵՎՈՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ



- 1) **հայտ** (N 1 ձև) հեռավար ձևով կրթություն կազմակերպելու և «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի» առևտրային կազմակերպության մագիստրոսի կրթական ծրագրով գործունեության 2016 թվականի մարտի 22-ի սերիա Մ N 0015 լիցենզիայում լրացում կատարելու մասին.
- 2) **տեղեկանք պրոֆեսորադասախոսական կազմի մասին**, որում նշվել են պրոֆեսորադասախոսական կազմի անդամների անունները, ազգանունները, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, որակավորումը, գիտական աստիճանը կամ կոչումը, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական).
- 3) տեղեկանք ուսումնական գործընթացի **գրադարանային-տեղեկատվական հագեցվածության մասին**.
- 4) տեղեկանք ուսումնական և արտադրական **պրակտիկաների** բազաներով ապահովվածության մասին.
- 5) կրթական ծրագրի մասնագիտությունների **ուսումնական պլանը**,
- 6) կրթական ծրագրի **առարկայական ծրագրերի ցանկը**.
- 7) տեղեկանք հեռավար (դիստանցիոն) ուսուցման կազմակերպման կիրառման համար **անհրաժեշտ հատուկ սարքավորումներով հագեցած տարածքների և պայմանների մասին**.
- 8) սովորողների **ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների) և մագիստրոսական թեզի պաշտպանության կարգերը**.
- 9) **Հեռավար ուսուցմամբ կրթական ծրագրերի իրականացման ժամանակ տեղեկատվական բազայի (ռեսուրսների) օգտագործման կարգ** (հիմք՝ ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատելու մասին» N 124-Ն որոշման պահանջ, նշված կարգի 14-րդ կետ).
- 10) տեղեկանք, որ Ակադեմիան հեռավար (դիստանցիոն) ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի իրականացնելու նպատակով իր միջոցների հաշվին՝ օրենքով սահմանված կարգով ապահովել է **ղեկավար, մանկավարժական, ուսումնասօժանդակ անձնակազմերի վերապատրաստումը և որակավորման բարձրացումը** (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատելու մասին» N 124-Ն որոշման 15-րդ կետ).
- 11) **Հեռավար ուսուցման (կրթության) իրականացման մեթոդաբանական ուղեցույց**.
- 12) **Հեռավար ուսուցման (կրթության) որակի ապահովման ներբուհական չափանիշները:**

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Սովորողների
ընդունելությունը, ինչպես
նաև ուսանողների
փոխադրումը,
տեղափոխումը, հեռացումը
և վերակազմումն
իրականացվում է ՀՀ
օրենսդրությամբ
սահմանված կարգով:



Հեռավար
ուսուցման
սուբյեկտները
սովորողներն ու
աշխատողներն են:





Ուսումնական գործընթացի
ընթացիկ վերահսկողությունը և
սովորողների միջանկյալ
ատեստավորումը իրականացվում է
ուսումնական հաստատության
կողմից **ավանդական մեթոդներով**
կամ էլեկտրոնային միջոցների
կիրառմամբ (էլեկտրոնային
թեստավորում)՝ **ապահովելով**
ուսանողների անձի
գաղտնիությունը:






Ծրագրի կոնկրետ պահանջները արտացոլված են թեստային առաջադրանքներում: Դրանք ունեն **2 հիմնական գործառույթներ՝ հսկիչ և խթանիչ:**


Առաջինն արտաքին **հսկողության ձևն է, որի օգնությամբ որոշվում է յուրացված գիտելիքների մակարդակը:**

Երկրորդն՝ **ինքնավերահսկողության ձևն է, որի օգնությամբ ուսանողը ռայտնաբերում և շտկում է սեփական գիտելիքների բացթողումները:**



ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐԹԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

- ❖ հեռավար ուսուցման հարթակում **ուսանողների գրանցման,**
- ❖ **հեռավար ուսուցման հարթակից օգտվելու կանոններ,**
- ❖ մասնակիցների միջև հաղորդակցման և զուտ հեռավար ուսման,
- ❖ ինչպես նաև **անձնական տվյալների պաշտպանության, գաղտնիության և պատասխանատվության** հետ կապված հարաբերություններ




Անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերյալ օրենսդրություն

Հեռավար ուսուցման համակարգում ուսանողների գրանցման, անձնական տվյալների պաշտպանության ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացման, օգտատերերի մոտ այլ ան-ձանց էլեկտ-րո-նա-յին հա-ղոր-դակ-ցույթ-յուն-նե-րի գաղտ-նիւթ-յան հարգանքի ապահովում

*«Անձնական տվյալների պաշտպանության մասին»
ՀՀ օրենք, ընդունված 2015 թվականի մայիսի 18-ին*

Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիա, որը ՀՀ համար ուժի մեջ է մտել 2012 թ. սեպտեմբերի 1-ին և այլն)



- 
- Անձնական տվյալները պետք է ձեռք բերվեն օրինական և արդար միջոցներով՝ տվյալների սուբյեկտի գիտությամբ կամ համաձայնությամբ:
 - Անձնական տվյալները պետք է ստացվեն օրինական ճանապարհով և անաչառորեն մշակվեն:
 - Տվյալների անաչառ օգտագործումը անձնական տվյալների մշակման քաղաքականության հիմնարար արժեքներից է:
 - Անձնական տվյալները պետք է պահվեն անվտանգ եղանակով՝ թե՛ տեխնիկապես, և թե՛ կազմակերպական առումով, և պետք է պաշտպանվեն ողջամիտ և պատշաճ միջոցներով պաշտպանվեն չթույլատրված փոփոխումից, վնասումից, անօրինական ոչնչացումից, պատահական կորստից, ոչ պատշաճ բացահայտումից կամ չհիմնավորված փոխանցումից:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

